ՆՄՈՒՇ
ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՓՈՒԼԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ

Հարց 1.

Արդյո՞ք այս պնդումը ճիշտ է:

Մշակութային այն արժեքները, որոնք գրանցված են կամ ենթակա են գրանցման մշակութային արժեքների պահպանական ցուցակում, ենթակա են արտահանման միայն այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետությունը մեկամսյա ժամկետում չի օգտվում դրանց գնման նախապատվության իրավունքից:

1) Այո:
2) Ոչ:

Հարց 2.

Թույլատրելի՞ է հնավայրի ամբողջական պեղումը:

1) անթույլատրելի է հնավայրի՝ բնակատեղիների, դամբարանադաշտերի, ամրոցների ամբողջական պեղումը:
2) այո, թույլատրվում է հնավայրի ամբողջական պեղումը:
3) թույլատրվում է հնավայրի պեղումը միայն սեփականատիրոջ համաձայնության դեպքում:

Հարց 3.

Մշակութային և բնության համաշխարհային ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիայի համաձայն ո՞րն է «Վտանգված համաշխարհային ժառանգության ցուցակի» ստեղծման հիմնական չափանիշը:

1) Ցուցակում ընդգրկվում են այն արժեքները, որոնց պահպանության համար պահանջվում են խոշոր աշխատանքներ և որոնց համար սույն Կոնվենցիայի շրջանակներում օգնություն է հայցվել:
2) Ցուցակում ընդգրկվում են բոլոր այն հուշարձանները, որոնք գտնվում են զինված հակամարտության գոտիներում՝ անկախ պետության դիմումից:
3) Ցուցակում ընդգրկվում են միայն այն օբյեկտները, որոնց տիրոջ իրավունքները վիճարկվում են միջազգային դատարաններում: